

Հրապարակային օՖերտա

Սույն պայմանները հանդիսանում են հրապարակային օՖերտա (առաջարկ), որը topsales.am համացանցային կայքէջում գրանցված ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ Բաժանորդ) կողմից ընդունվելու (ակցեպտավորվելու) պահից հանդիսանում են Բաժանորդի և topsales.am համացանցային կայքէջում առկա Ակցիայի պայմաններ բաժնում նշված անձի (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս «ԹՈՓՍԵԼՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ներկայացուցիչ), որը գործում է Վաճառողի անունից, (այսուհետ՝ յուրաքանչյուրը նաև՝ Կողմ, իսկ միասին՝ Կողմեր) միջև կնքված պայմանագիր:

Տերմիններ և սահմանումներ

Բաժանորդ՝ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձ, ով գրանցված է topsales.am համացանցային կայքէջում:

Վաճառող՝ Ակցիայի պայմաններ բաժնում նշված իրավաբանական անձը և/կամ անհատ ձեռներեց, ով առաջարկում է ապրանքներ և մատուցում է ծառայություններ:

Հրապարակային օՖերտա՝ Պրինցիպալի կողմից մատուցվող ծառայությունների և առաջարկվող ապրանքների վերաբերյալ Գործակալի կողմից անսահմանափակ թվով անձանց ուղղված առաջարկություն, որից հետևում է նշված պայմաններով յուրաքանչյուր արձագանքողի հետ պայմանագիր կնքելու Գործակալի կամքը:

Ակցիա՝ Վաճառողի կողմից մատուցվող ծառայությունները և առաջարկվող ապրանքները առավել բարենպաստ պայմաններով, արժեքից ցածր գնով բաժանորդներին առաջարկելու վերաբերյալ միջոցառում:

Ակցեպտ՝ սույն պայմանագիրը կնքելու լրիվ և անվերապահ համաձայնություն:

Կուպոն՝ կտրոն, որը պարունակում է տառաթվային կամ թվային ծածկագիր, ինչը հնարավորություն է տալիս բաժանորդին Ակցիայի անցկացման ժամանակաշրջանում Ակցիայի պայմաններին համապատասխան Վաճառողից ձեռք բերել ապրանքներ կամ ծառայություններ:

Ակցիայի անցկացման ժամանակաշրջան՝ ժամանակահատված, որի ընթացքում բաժանորդներին տրվում է կուպոն ձեռք բերելու հնարավորություն:

Կտրոնի վավերականության ժամկետ՝ ժամանակահատված, որի ընթացքում Վաճառողը ծառայություններ է մատուցում կամ ապրանքներ է առաջարկում կուպոն ներկայացնող բաժանորդներին:

1. Պայմանագրի առարկան, պայմանները և գործողության ժամկետները

1.1 Պայմանագրի առարկան, պայմանները և գործողության ժամկետները սահմանված են topsales.am համացանցային կայքէջում գետեղված Ակցիայի նկարագիրը բաժնում, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը՝ Չավելվածը: Պայմանագրին կից հավելվածում նշված բոլոր պայմանները հանդիսանում են Պայմանագրի պայմանները:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 topsales.am համացանցային կայքէջում առկա ապրանքների կամ ծառայությունների պատվիրումը կարարվում է էլեկտրոնային եղանակով:

2.2 Սույն պայմանագիրը կնքելու լրիվ և անվերապահ համաձայնություն է համարվում Բաժանորդի կողմից Ներկայացուցչին պատկանող topsales.am համացանցային կայքէջում գրանցվելը և սույն պայմանագրի 3.1-րդ կետով նախատեսված կարգով վճարումը կատարելը:

2.3 Սույն պայմանագրով Ներկայացուցչի իրավասությունները սահմանափակվում են topsales.am համացանցային կայքէջում Վաճառողի անունից առաջարկվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ պայմանները տեղադրելով, ինչպես նաև Բաժանորդին Կուպոն տրամադրելու միջոցով գործարքի ձևակերպմամբ:

2.4 Ակցիայի պայմանների իրականացման վերաբերյալ բողոքները ներկայացվում են Վաճառողին: Ներկայացուցիչը պատասխանատվություն չի կրում Վաճառողի կողմից Պայմանագրի կատարման համար, քանի որ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները ծագում են անմիջապես Բաժանորդի և Վաճառողի մոտ:

2.5 Բաժանորդի կողմից Պայմանագրի կնքման ապացույց է հանդիսանում Վաճառողին կուպոնի վրա տեղադրված հատուկ ծածկագրի տրամադրումը:

Պայմանագրի կնքման ցանկացած այլ ապացույց ենթակա չէ Վաճառողի կողմից քննարկման:

2.6 Բաժանորդը համաձայն է, որ topsales.am համացանցային կայքէջում գրանցված ընթացակարգերը անցնելուց հետո, Բաժանորդի էլեկտրոնային հասցեով կուղարկվեն նամակներ և հաղորդագրություններ, այդ թվում՝ նաև գովազդային բնույթի: Բաժանորդը՝ անձնական պրոֆիլում նշելով իր հեռախոսահամարը, ինքնաբերաբար համաձայնվում է ստանալ գովազդային բնույթի SMS հաղորդագրություններ: Տվյալ հաղորդագրությունների ստացումը դադարեցնելու համար Բաժանորդը պարտավորվում է լրացնել հայտ՝ օգտվելով Ներկայացուցչի կայքում գետեղված հետադարձ կապից:

2.7 Բաժանորդը համաձայն է, որ Ներկայացուցչի կողմից օգտագործվում և մշակվում են Բաժանորդի անձնական տվյալները:

2.8 Ներկայացուցիչը պարտավորվում է երրորդ անձանց չփոխանցել Բաժանորդի հասցեն և նրա վերաբերյալ այլ տեղեկությունները:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Կուպոնի գինը ներկայացվում է Կայքի համապատասխան բաժնում, որն իրավունք է տալիս Բաժանորդին Վաճառողի կողմից մատուցվող ծառայություններից և առաջարկվող պրանքներից օգտվել զեղչով: Կուպոնի համար վճարումը կատարվում է topsales.am համացանցային կայքէջում նշված Էլեկտրոնային վճարման միջոցով:

4. Կուպոնի օգտագործման կարգը

4.1 Կուպոնի վավերականության ժամկետը նշված է topsales.am համացանցային կայքէջում և կուպոնի վրա:

4.2 Կուպոնի վավերականության ժամկետի ավարտից հետո Բաժանորդը կորցնում է կուպոնի հետ կապված բոլոր իրավունքները և ենթակա չէ վերադարձման վճարված գումարը:

4.3 Կուպոնը անվանական չէ, ենթակա է փոխանցման և կարող է օգտագործվել միայն մեկ անգամ:

4.4 Բաժանորդը կարող է միաժամանակ գնել մի քանի կուպոններ, եթե այլ բան նախատեսված չէ Վաճառողի կողմից:

4.5 Կուպոնը համարվում է պատշաճ կարգով ներկայացրած, եթե ներկայացվել է Ներկայացուցչի կողմից ուղարկված SMS հաղորդագրությունը կամ տպված կուպոնը:

4.6 Բաժանորդը պարտավորվում է կուպոնը օգտագործել Պայմանագրին համաձայն, չփորձել դիմել որևէ խարդախության կամ շոջանցել Ներկայացուցչի կամ Վաճառողի շահերը:

4.7 Անչափահաս բաժանորդի կողմից Ներկայացուցչին պատկանող topsales.am համացանցային կայքէջում գրանցվելուց և սույն պայմանագրի 3.1-րդ կետով նախատեսված կարգով վճարումը կատարելուց հետո տարածայնությունների առաջացման դեպքում անչափահաս բաժանորդի կողմից վճարված գումարը ենթակա չէ վերադարձման:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Բաժանորդի կողմից կուպոնի կորստի կամ ծածկագրի վնասման կամ այլ դեպքերում Վաճառողը և Ներկայացուցիչը պատասխանատվություն չեն կրում:

5.2 Ապրանքների առաջարկման և ծառայությունների մատուցման հետ կապված ամբողջ պատասխանատվությունը կրում է Վաճառողը:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Սույն պայմանագրի կատարման կամ մեկնաբանման հետ ծագած բոլոր վեճերը Կողմերի միջև պետք է լուծվեն բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում բոլոր վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2 Սույն պայմանագրի որևէ դրույթ անվավեր կամ առ ոչինչ ճանաչվելու դեպքում մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:

6.3 Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, սակայն կարող է թարգմանվել և հրապարակվել (այդ թվում նաև Հավելվածները) այլ լեզուներով, սակայն հայերենի և այլ տարբերակների միջև հակասության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը: